ՍՈՂՈՄՈՆԻ ԱՂԲԻՒՐԸ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊՕԷՄԱ ԵՐԵՔ ՊԱՏԿԵՐՈՎ

ԼԵՒՈՆ ՄԱՆԻԼԼԵԱՆՑԻ

ՊՕԷՄԱՅԻ ԱՆՁԻՆՔ

Սողոմոն, գիւղի պատուաւոր անձը
Ռափայէլ, նրա որդին
Մելքոն, գիւղի ազդեցիկ անձը
Օսաննա, նրա աղջիկը
Եղիա, Սողոմոնի բարեկամը
Մարուք, Մելքոնի բարեկամը
Մելիք-Յակոբ, գիւղի տանուտէրը
Երիտասարդ
Ծերունի իւր երկու թոռնիկներով
Աշուղ
Երկու գիւղացի
Գիւղացիներ, տղամարդիկ, կանայք, աղջկերք, երեխաներ

Գողծողութիւնը կատարւում է Գողթնում։

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Տեսարանը ներկայացնում է եկեղեցու գաւիթը, որը մի բաւական մեծ և պարիսպներով շրջապատուած տարածութիւն է, ծածկուած ճանապարհի երկու կողմից գերեզմաններով։ Ծառերի

Եպևից երևում է եկեղեցին իւր գմբէթով։ Զանգերը ղողանջում են։ Գաւիթը լցւում է գիւղացիներով։ Կանայք և երեխաներ միանգամայն բացակայում են։ Ժողովուրդը տեղաւորւում է գերեզմանաքարերի վրայ։ Բազմութիւնը խտանում է ծառերի սլաներում։

ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲ

Էլ ում ենք սպասում? Մեր իշխանները
Հիմա ամենքը այստեղ ներկայ են,
Եւ բաւականին ժողովուրդ էլ կայ։

ՄԵԼՔՈՆ

Խօսքը քոնն է, Սողոմոն, սկսիր։

ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲ (ժողովրդին)

Սուս, մի խանգարէք... Լռութիւն... Սիմոն,
Հարևաններիդ ասա, մունջ կենան։

ՍՈՂՈՄՈՆ

Ժողովուրդ, գուցէ ձեզնից շատերը
Դեռ չեն իմանում—ինչի համար ենք
Հաւաքւել այստեղ. և որովհետև
Մեր այս ժողովի պատճառը ես եմ,
Ուրեմն խօսքը ինձ է պատկանում։
Ժողովականներ, ես մտադիր եմ
Այստեղ արծարծել մեր գիւղը աղբիւր
Բերելու հարցը։

ԵՂԻԱ

Ախ, օրհնեալ լինի այն օրն ու ժամը,
Երբ մենք ջրառատ աղբիւր կունենանք!

ՍՈՂՈՄՈՆ

Ջուրը Աստրծոյ այն սուրբ պարգևն է,
Որ անապատը դրախտ է շինում,
Իսկ եթէ չը կայ, կանաչ դրախտը

Ամայանում է, անապատ դառնում։
Երեսուն տարի մեղանից առաջ
Մեր գիւղը այսպէս չոր աւերակ չէր,
Այլ շէն, շատ շէն էր... Կանաչ, խիտ և զով
Այգիների մէջ կորած էր գիւղը,
Եւ մինչև կէսօր փայլում էր ցողը
Ծաղկանց, թըփերի, մարդերի վերայ։
Առատ էր հունձը և հողի բերքը։
Եւ ժողովուրդը չըզլխէր կարիք,
Այլ միշտ գոհ, ուրախ և հաշտ ապրում էր
Եւ փառաբանում վերին Արարչին։
Մենք այն ժամանակ աղբիւր ունէինք,
Այն էլ ինչ աղբիւր... Ախ, այն ասպիճան
Վարար էր ջուրը, որ իր հոսանքում
Ջաղաց էր բանում։ և ձեռք էր սառչում,
Ով մի հինգ բոպէ պահում էր մէջը։
Կըպրում էր խարակ ալմաղի նման—
Այնքան սառն էր նա։ Նըրա ցայտերը,
Ինչպէս ադամանդ, փայլփլում էին
Արևի ամեն մի ճառագայթից,
Եւ ինչ պարզ էր նա, ինչպէս թափանցիկ։
Նրա մէջ ողկոյզը ծածկւում էր կարծես
Մարգարիտներով... Այո, ժողովուրդ,
Մեր գիւղի համար մի անգին գանձ էր
Այն կաթնաղբիւրի յորդառատ ջուրը,
Որովհետև նա լիացնում էր մեզ,
Եւ մեր այգիքն ու անդաստանը!

ԵՂԻԱ

Հա՛, լաւ աղբիւր էր, ափսոս, փըճացաւ!

ՍՈՂՈՄՈՆ

Բայց այստեղ նըստած բոլոր ծերերը
Անշուշտ յիշում են Տիրոջ պատիժը—

Այն մեծ հեղեղը, որ հիմնայատակ
Կործանեց փըներ, աւերեց այգիք,
Եւ այն աղբիւրը, որ մինչև այսօր
Ոչ ոք չը գիտէ, ուր անհետացաւ—
Կարծես անդունդը կլլանեց նրրան։
Հիմա մեր յոյսը մեր գետակն է,—
Բայց միայն Աստուած գետակ համարէ,—
Մեզանից վերև քանի գիւղեր կան,
Որ ըսպառում են նրրա ջրերը,
Եւ միայն չընչին մասը բաց թողնում
Դէպի մեր գիւղը... Հերթի պատճառով
Ծագում է կռիւ, հայհոյանք և ծեծ...
Եւ այսպէս, ջրի սակաւութիւնից
Մեր բարք ու վարքը վայրենանում է։
Սիրտ է մրմկրտում, երբ մարդ տեսնում է,
Որ մինչև անգամ մեր ծառերն էլ,
Իրանց խընամող տէրերի նման,
Ծարաւից կախ են գրցում գլուխները
Եւ կարծես լալիս. մինչև մի կաթիլ
Ջուր հասնի իրանց, շատերը թոռմում
Եւ չորանում են...

ՄԵԼՔՈՆ

Ինչ որ ասում ես,
Սողոմոն, ճիշտ է և իրաւացի։
Բայց ինչ կարող ենք դրրա դէմ անել
Մենք, խեղճ, հասարակ մահկանացուներս?

ՄԱՐՈՒՔ

Հէնց այդ է հարցը, ինչպէս Մելքոնը
Ուղիղ նրկատեց. ինչ անենք դրա դէմ?
Երկընքից ջրեր ցած բերենք ներքև—
Մեր ուժից վեր է։ Իսկ գետնի տակին
Հորերի ջուրը մեծ մասամբ աղի
Եւ կամ անպէտք է։

ՍՈՂՈՄՈՆ

Զեզնից, բարեկամք,
Ցանկութիւն լինի, ինձնից—ցոյց տալ ձեզ
Դըրա հընարը,—և մենք կ'ուներանք,
Ասպուծով, մի օր հրեղէն աղբիւր!...

ԵՂԻԱ (նկատելով շուրջը անհանգիստ շուկ)

Մելիք, այն կողմում բարձր են խօսում
Եւ խանգարում են։

ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲ

Լուռ կացէք այդտեղ!
Ժողովականներ, ուշադրութիւն!...

ՍՈՂՈՄՈՆ

Ինչ պիտի յայտնեմ, ոչ թէ մի օրւայ
Մըտածողութեան ծընունդ է, այլ շատ
Եւ շատ օրերի։ Դուք ինձ շատ անգամ
Տեսած կը լինիք այն քարաժայռի
Մի ծայրին նըստած. և անշուշտ մէկը
Ասած կը լինի. «Մեր Սողոմոնը
Կամ ճըգնաւոր է կամենում դառնալ
Եւ կամ ցընդել է, որ այծեամի պէս
Անցնում է օրը ժայռերի գըլխին»։
Բայց ահա այնտեղ, առանձնութեան մէջ,
Ես խորհում էի աղբիւրի մասին։
Եւ բաղդաւոր միտք ինձ լուսաւորեց։
Հիմա լըսեցէք։ Մեր սարի կողմ
Կայ մի ապառաժ, որի լանջի վրայ
Երևում է ծերպ, լըրացած լուսնի
Սկաւառակի չափ, որ թըւում էր ինձ
Երբեմն արծաթի կամ ուրուրի բոյն։
Բայց հետևելով ջըրի շիթերին,
Որ ծորում էին ժայռի ճեղքերից,

Եւ, սրտորոտի մօտ միախառնելով,
Վազում առուի պէս, ես գուշակեցի,
Որ այնտեղ անշուշտ թագնուած է սիրուն
Աղբիւրի մի ակն։ Վրճռեցի վերև
Բարձրանալ—իսկոյն կատար ածեցի
Իմ ցանկութիւնը, և, մագլցելով,
Հասայ այն ծերպին և, խոռոչի մէջ
Ձրգելով աչքս—ինչ տեսնեմ—մի խոր,
Գողտրիկ գաւազան, որ բընութիւնը
Իւր մեծահանճար վարպետի ձեռքով
Կերտել էր այնտեղ, քարաժայռի մէջ,—
Ծովացած ջուրը այնպէս ջինջ ու պարզ
Եւ այնքան պաղուկ, որ կարծես թէ ես
Կանգնած էի ոչ ջըրամբարի մօտ,
Այլ սառցարանի մուտքի առաջև...
Այնպիսի անուշ և անասելի
Քաղցր զովութիւն փըչեց երեսիս...
Ես ըսքանչացայ, սըրտի բերկրութեամբ,
Գոհութեամբ լըցած բացականչեցի.
«Ահա մեր գիւղի իսկական դանձը!
Սըրա ջըրերը մեր գիւղի միջում
Պէտք է քըչքըչան, սըրա ջըրերով
Մեր գիւղը նորից պիտի կանաչի
Եւ փարթամանայ!...»

ՄԵԼՔՈՆ

Ինչ նոր բան է այդ?
Ամեն մի հովիւ, որ ոչխարներին
Տանում է սարը արածացնելու,
Քո ասած սառը ջըրից խըմում է
Եւ խըմացնում իր ոչխարներին։

ՄԱՐՈՒՔ

Ինչ? Մոռացել էք ձեր մանկութիւնը?
Մենք քանի անգամ ուրախ խըմբերով

Վաղվըզել ենք այն ժայռերի գըլխին,
«Կարմիր-ճանկ» ծաղկի եւրեւից ընկած?
Եւ քանի անգամ քո սասած ջըրով
Զովացրել ենք մեզ մանուկ հասակում...

ՍՈՂՈՄՈՆ

Բայց այն ով գիտէր, որ ժայռի կըրծքում
Կայ սիրուն մի ակն, որ ինչպէս մի մայր
Իւր անուշ կաթով, կարող է կեանք տալ
Մեր ամբողջ գիւղին իւր անապական,
Անարատ ջըրով? Բայց այդ չէ հարցը
Այլ հարցը այն է, որ մեր մտքերքում
Կայ մի աղբերակն, և նըրա ջուրը
Մենք կարող ենք մեր գիւղի մէջ բերել
Եւ ահա այդ է իմ առաջարկը,
Որի համար և այսքան ժողովուրդ
Խըմբուել է այստեղ։

ՄԷԿԸ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Հիանալի միտք!

ԵՐԿՐՈՐԴԸ

Օրհնեալ այն մարդու բերանը, որ մեզ
Այդ միտքը յայտնեց!

ԵՐՐՈՐԴԸ

Երնէկ այն օրին,
Երբ մեր գիւղի մէջ աղբիւր կը վազի! ..

ԵՂԻԱ

Դա կը լինի մի Աստըծոյ պարգև,
Որ բաշխում է մեզ սրա արդար ձեռքով.

ՄԵԼՔՈՆ

Եւ ժողովուրդը արդէն հաւատաց,
Որ գիւղը մի օր աղբիւր կունենայ!...
Ծիծաղելի է!... Դուք, միամիտներ,

Ինչ հեշտ հրապուրել և խաբեել գիտէք!
Չը լինի թէ դուք կարծեցիք, այստեղ
Ձեր առջև կանգնած խօսում է մի նոր
Խիկար-իմաստուն և կամ Սողոմոն,
Որ Աստուածային պատգամ է յայտնում?
Հընարը լաւ բան ասելը չէ, ոչ,
Այլ այն, որ խօսքդ ի կատար ածես!
Սողոմոնը մեզ առաջարկում է
Սարի ետևից ջուր բերել այստեղ.
Բայց մըտածեցէք—կարելի է այդ?
Խելքի մօտիկ է?... Ինչպէս? Ուրեմըն
Այս սարը քանդենք? ժայռերը պոկենք
Իրանց տեղերից?...

ՍՈՂՈՄՈՆ

Ո՛չ, ինչ կարիք կայ
Սարեր քանդելու, ժայռեր պոկելու?
Ո՛չ, ես գըտել եմ այն ճանապարհը,
Որով առուակը, միայն մի քանի
Պըտոյտ անելով սարի լանջի վրայ,
Ինչպէս լեռնային սըրընթաց վըտակ,
Կայտառ և ուրախ կը վազի ներքև
Եւ մեր գիւղի մէջ անուշ ձայն կը տայ...

ՄԵԼՔՈՆ (հեգնական ծիծաղով)

Միայն քո գըլխում անուշ ձայն կը տայ,
Սողոմոն, բայց ոչ մեր գիւղի միջին...

ՍՈՂՈՄՈՆ

Բարի կամք է պէտք, և յորդ աղբիւրը,
Ես ասում եմ ձեզ, անուշ ձայն կը տայ
Մեր գիւղի միջին!...

ՄԵԼՔՈՆ

Եթէ թոյլ էլ տանք,
Որ ճանապարհը դու մըտածել ես

Եւ արդէն գիտես, բայց ես քեզ ուրիշ
Արգելքներ կ'ասեմ։ Որտեղից գըտնենք
Մենք պարապ ձեռքեր, որ սեփական գործ,
Աշխատանք թողած, օրեր, ամիսներ
Քրտնաթոր բանեն, քանդեն քարափներ,
Ժողովեն կաշկառ, ճանապարհ հարթեն
Եւ հողը փորեն?... Ասենք, այդ էլ կայ։
Բայց ինչպէս գըտնենք, ինչպէս հաւարենք
Մենք այնքան գումար, ոչ մշակներին
Եւ նըրանց բոլոր գերդաստաններին
Օրեր, ամիսներ գուցէ և տարի
Ապրուստ տանք, պահենք?...

ՍՈՂՈՄՈՆ

Մենք ամենքըս էլ
Հերթով կ'աշխատենք. ես առաջինը
Իմ ձեռքս կ'առնեմ բահը և լինգը.

ԵՂԻԱ

Եւ ես էլ քեզ հետ։

ՍՈՂՈՄՈՆ

Մեզ հետ էլ նոյնպէս
Ուրիշ շատերը, և կը սկսի եռալ
Մեր աշխատանքը... Մեծ գումար պէտք չէ։
Ամենաշատը, ամենաշատը
Մի չորս-հինգ հազար, և արդէն գործը
Գըլուխ եկած է...

ՄԵԼՔՈՆ

Օ, չորս-հինգ հազար!
Հէնց այդ էր պակաս մեր աղքատ և խեղճ
Այս ժողովըրդին! Ինչ հեշտ է ասել—
«Մի չորս-հինգ հազար!»... Առանց այն էլ մեր
Այնքան չարչարանքն ու այնքան գումար

Ի դերև ելաւ... Ջուր փորձեր արինք
Մեր «Հին աղբիւրը» մի կարգի բերել,
Նորից ջուր հանել. բայց դուք հո տեսաք,
Որ ոչինչ չ'ընկաւ մեր ձեռը, ոչինչ!...
Այդպէս կը լինի և հէնց այս անգամ!

ՍՈՂՈՄՈՆ

Փողը թող լինի ունևորներից,
Իսկ աշխատանքը — չունևորներից!

ՄԵԼՔՈՆ

Ես սար ու քարում շաղ տալու համար
Աւելորդ մի հատ կոպէկ էլ չ'ունիմ!

ՄԱՐՈՒՔ

Ես ևս,—ինչպէս Մելքոնն ասաց։

ՄԷԿԸ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Եթէ այսպէս է ասում հարուստը,
Էլ ինչ կարող է ասել աղքատը?

ՍՈՂՈՄՈՆ

Մելքոն, դու արի, մի՛ հակառակուիր.
Տես—քեզ է նայում այս ժողովուրդը.

ՄԵԼՔՈՆ

Ո՛չ, ժողովուրդը ինքը խելք ունի.
Եթէ ուզում է, կարող է և տալ
Համաձայնութիւն. և այն ժամանակ
Ես կը մնամ մենակ—ամենից յիմար
Եւ կամ ամենից խելօքը այստեղ։

ՄԱՐՈՒՔ

Աւելի լաւ է, ձայներ հաւաքենք։

ՄԵԼՔՈՆ

Լաւ, հաւաքեցէք։

ՄԵԼԻԲ-ՅԱԿՈԲ

Ժողովուրդ, թող նա,
Ով համաձայն է Սողոմոնի հետ,
Վեր կենայ տեղից. ով հակառակ է,
Թող նըստած մընայ!

(Ժողովուրդը նստած է մնում. Ոմանք վեր են կենում և էլի նստում. Ռոի վրայ են միայն Եղիան, Ռափայէլը և սրա ընկերները).

ՄԵԼՔՈՆ (հպարտ)

(Վեր է կենում) Հիմա ամեն մարդ կարող է գընալ
Իր բանին գործին։

ՍՈՂՈՄՈՆ

Է՛հ, Աստուած ձեզ հետ!
Գընացէք!... Ես էլ,—թող վրկայ լինի
Ահա այն խաչը գըմբեթի ծայրին,
Գընում եմ մենակ իրագործելու
Իմ այս հանրաշահ ձեռնարկութիւնը,
Այն երևելի և ազնիւ գործը,
Որից դուք այդքան փոքրոգութեամբ
Հրաժարուեցիք... Այսուհետ չը կայ
Ինձ համար շուկայ, այլ հոգս և հանգիստ.
Այսուհետ բահն է իմ գուսպանը,
Իմ աղբիւրը՝ն է իմ խոսակիցը,
Օրնիբուն պիտի քրքրնաչան բանեմ
Իմ ձեռքով վարձած մշակներիս հետ.
Իմ ունեցածը պիտի վեր դընեմ,
Պիտի չը մեռնեմ մինչև այն օրը,
Երբ ծըրագիրըս յանգած կը լինի
Բարի վախճանի!... Իսկ նա, որ այստեղ
Ծաղրելով ծաղրեց իմ առաջարկը
Եւ ձեր բարիքին խոչընդոտ եղաւ,
Թող չը մոռանայ այս օրուայ օրը!...
Ես մարգարէ չեմ, բայց հաւատացէք
Իմ գուշակութեան,—կը գայ ժամանակ,

Եւ մեր գիւղի մէջ, ձեր աչքի առաջ,
Իմ ջինջ աղբիւրը քաղցր ձայն կը տայ,
Եւ,—վըստահ եմ ես,—դուք բոլորդ հլ
Կը մըտաբերէք այս օրւայ օրը!... (Դնում է)։

ՌԱՖԱԷԼ (հեռանելով հօրը)

Հայր, դու մենակ չես! Ես էլ քեզ հետ եմ!

ԵՂԻԱ (հեռանելով Սողոմոնին)

Ես էլ, Սողոմոն, քո օգնականը։

Վարագոյր։

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

ՓՈՂՈՑ, ՄԵԼՔՈՆԻ ՏԱՆ ՄՕՏ

(Երևում են երկու գեղջուկ)

1-ԻՆ ԳԵՂՋՈՒԿ

Այս գիշերւանից Եկեղեցու մէջ
Կը սկսի հրսկում։ Թող ժողովուրդը
Ջերմեռանդ սըրտով հաւաքւի մէկտեղ
Եւ ծունկ խոնարհած սեղանի առաջ՝
Սուգ անեն, ողբան և արտասւագին
Աղօթեն. տեսնենք, գուցէ Տէր Աստուած
Մեղքանայ և մեզ տայ առատ անձրև...

2-ՐԴ ԳԵՂՋՈՒԿ

Բայց նայիր այնտեղ։ Տէս, սարի գըլխից
Ինչ ծանըր-ծանըր բարձրանում է սև
Բըլրաչափ մի ամպ։

1-ԻՆ ԳԵՂՋՈՒԿ

Այդպէս պատահեց
Եւ երէկ, ուղիղ այս ժամանակիս.

Երեւաց մի ամպ, մի կայծակ խրփեց,
Մի անգամ գոռաց, և առանց մի հատ
Կաթիլ անձրեւի կերկին ետ քաշուեց
Եւ ցերիւ եկաւ։

2-ՐԴ ԳԵՂՋՈՒԿ

Ո՛չ, կամաց-կամաց
Մեծանում է նա, և հորիզոնը
Մըթնում է արդէն... Ա՜խ, թէ Աստծոյ
Ողորմութիւնը շուտ վերայ հասնէր!...
Եթէ ոչ, ահա երկու ամիս է,
Երկինքը բարձրից կերակ է թափում,
Այրում, խանձում է փարուցանք, ծառեր,
Բայց դեղի համար գոնէ մի անգամ
Այսքան ժամանակ մի կաթիլ չ՚ընկաւ...

1-ԻՆ ԳԵՂՋՈՒԿ

Անսէրութիւնը երբ որ բուն դերից
Ժողովրդի մէջ, Աստուած էլ Ներանից
Երես կը դարձնի...

2-ՐԴ ԳԵՂՋՈՒԿ

Այս ինչ պատիժ էր,
Սրարիչ Աստուած, որ դու մեզ տրուիր!
Փճացաւ այգիս և անդաստանիս!
Իզուր իմ խոփը պատռեց արգաւանդ
Իմ արտի կուրծքը. իզուր եզներիս
Քրտնաթոր եղան ինձ հետ միասին,
Արեգակի տակ հլու տանելով
Գութանի լուծը. հազիւ մի կանգուն
Բարձրացաւ հասկը, ջերի պապակից
Ներքա հասակը շուտով կանգ առաւ,
Հացահատիկը չորացած մընաց...
Չորացաւ թթի իմ ծառատունկը,
Որ միւս գարնան տերև պիտի տար

Ներամիս համար. դեղնեց իմ վազը,
Եւ վրտիպ ճիւղը հազիւ է պահում
Անհիւթ ճիթերը... Այդին այլ ևս
Այգու տեսք չունի. աշնան սկզբում,
Տերևաթափին աւելի ուրախ,
Աւելի սիրուն է լինում այգին.
Ծառերը տրխուր, գլուխները կախ,
Փոշիով պատած՝ կարծես թմրում են...
Մինչև իսկ հողը՝ կոշտացած և չոր
Ճաքեճաք եղած՝ հազար բերանով
Կարծես վերևից անձրև է հայցում...

1-ին ԳԵՂՋՈՒԿ

Ինչ ես լաց լինում, եղբայր. իմը ևէլ
Ջոնից պակաս չէ. Աստած ողորմած
Եւ բարեգութ է. եթէ նա չանայ
Մեր աղաչանքին, մեր արդար մանկանց
Ձայնը կը հասնի Ամենաբարձրին։
Յոյսդ մի՛ կտրիր... Տեսար? Կայծակ էր!...

2-րդ ԳԵՂՋՈՒԿ (խուլ որոտում)

(Գլխարկները հանում, երեսները խաչ են անում)
Բարերար Աստած!...

1-ին ԳԵՂՋՈՒԿ

Ես քեզ ասում եմ,
Յոյսդ մի՛ կտրիր. հլսկումը չեղած,
Մեզ լսեց Աստած, և սուրբ Յակոբայ
Աղբիւրից բերած ջուրը, թափորը
Զուր տեղը չանցաւ։ Նախավերկայի
Սուրբ աջն էլ մեզ օգնական եղաւ...

2-րդ ԳԵՂՋՈՒԿ (կրկին կայծակ և որոտում)

Մեռնեմ այդ ձայնին, զօրաւոր երկինք!
Դէ հիմա թափիր, հիմա վեր ածա

Առաջ անձրևը դ!... (կրկին կայծակ և որոտ)
Քամի բարձրացաւ.
Ահա երեսիս մի կաթիլ ընկաւ.
Փառքը դ շատ, Աստուած!...

1-ին ԳԵՂՋՈՒՒ

Ահա մէկը էլ
Իմ ձեռքիս ընկաւ... (որոտը և կայծակը լաճախակի)

2-րդ ԳԵՂՋՈՒԿ

Նայիր—ինչ արագ
Գալիս են այս կողմ սև-սև թըլխպերը...

1-ին ԳԵՂՋՈՒԿ

Ինչ մթնեց օրը!

2-րդ ԳԵՂՋՈՒԿ

Ծիծեռնակները
Ճչալով ինչպէս կտրում են օդը!...

1-ին ԳԵՂՋՈՒԿ

Բայց վա՛յ մեզ, եթէ այս խելառ քամին
Ամպերը քըշի... (որոտումը գնալով թուլանում է)

2-րդ ԳԵՂՋՈՒԿ

Հէնց այդպէս էլ է...
Արագ գալիս են և արագ անցնում,
Եւ այսքան կայծակ—որոտմունքից յետոյ,
Ա՛խ, անգութ ամպեր, միթէ միմիայն
Երկու հատ կաթիլ մեզ բաժին ընկաւ?...
Նախիրը հանդից երբ տուն է գալիս,
Այն կովը, որի կուրծքը շատ է լի,
Կաթը չի պահում, կաթկաթում է նա,
Հողը թաց անում, մինչև տեղ հասնի...
Իսկ այս ամպերը, որոնց ջըրերով

Ծովը կ'լրցուէր և գեպ կը վազէր,
Այսքան անողոք և այսչափ ժըլատ...

1-ին ԳԵՂՋՈՒԿ

Գընանք, բարեկամ։ Ինչպէս էլ լինի,
Անձրև պիտի գայ։ Եթէ ոչ այսօր,
Վաղը անպատճառ։

2-ՐԴ ԳԵՂՋՈՒԿ

Քո բերնի խօսքը
Թող Աստուած լըսի։—Արի, ասում եմ,
Այսպէս մանգալով բարձրանանք վերև,
Ուր Սողոմոնի մարդիկ օրն ի բուն,
Բոլոր յոյսերը Աստըծուն կապած՝
Աղբիւրի գործը առաջ են տանում։

1-ին ԳԵՂՋՈՒԿ

Բայց թէ յաջողուեց, խոստովանք լինի,
Բերած աղբիւրը մեծ բան կը տեսնի,
Մի այսչափ դըժուար և վատ ժամանակ.
Երբ եօթ շարաթ է երկինքը կապուած՝
Անձրև չի ցօղում... Ուզում ես, գընանք։
(Գնում են)։

ԵՐԵՒՈՅԹ II

ՌԱՓԱՅԷԼ. ՕՍԱՆ (լուսամուտի մօտ)

ՕՍԱՆ

Ռափայէլ?...

ՌԱՓԱՅԷԼ

Օսան?... Այդտեղ ես, ջանըս?
Կարօտից մեռայ, մինչև քեզ տեսնեմ։

ՕՍԱՆ

Ռափայէլ, գիտես, հայրըս գալիս է
Օտարութիւնից։ Այսօր նամակ կար։

ՌԱՓԱՑԷԼ

Հայրըդ գալիս է? Ինչ կայ որ? Թող գայ։
Ինչ լինելու է, թող շուտով լինի։
Հայրըդ դանակը մեր բըկին դըրած՝
Ոչ մորթում է մեզ և ոչ բաց թողնում.
Եւ երկուսըս էլ, երկու մոմի պէս,
Վառուում-հալուում ենք սիրոյ կըրակից..

ՕՍԱՆ

Ա՛խ, իմ Ռափայէլ, ինչ կ՚անենք, թէ մեզ
Միմեանցից բաժնեն?...

ՌԱՓԱՑԷԼ

Միմեանցից բաժնեն?
Ինչպէս այդ խօսքը թըռցրիր բերնիցըդ?
Ով ուզու է միմեանցից բաժնել,
Գըլխից ձեռք քաշած մարդ պիտի լինի.
Թող առաջ գընայ քահանայի մօտ
Հաղորդուի, յետոյ.. Բայց ո՛չ, Օսան ջան,
Ձեն համարձակ իլ! Հայրըդ էլ գիտէ
Եւ ամեն մէկը լաւ իմանում է,
Որ Սողոմոնի որդու գընդակը
Հասնում է ուղիղ իւր նըպատակին,
Եւ Ռափայէլի ձեռքից չեն պըրծնում
Նոյն իսկ օդի մէջ թըռչող ագռաւը,
Յինը և բազէն... Ո՛չ, դու իմըս ես,
Հոգուս հատորը!... Աշխարհի աչքը
Թող քեզ վրայ լինի—միևնոյնն է.
Օսանի տէրը և տիրականը
Ռափայէլն է!...

ՕՍԱՆ

Ջա՛ն, ջա՛ն, Ռափայէլ!...
Դու ես իմ տէրը և տիրականը,
Սիրտ ու ջիգեարս և իմ մուրազըս!

ՌԱՓԱՑԷԼ

Ով մի ծուռ աչքով քեզ վերայ նայի,
Ես նրրա ծուխը վեր կը բարձրացնեմ!

ՕՍԱՆ

Երնէկ, Ռափայէլ, հայրըս, գայ թէ չէ,
Քո հօր հետ հաշտուեն...

ՌԱՓԱՑԷԼ

Կը հաշտուեն, Օսա՛ն,
Մի օր կը հաշտուեն! Եւ, եթէ միայն
Մեր հայրերը մեր բարին են ուզում,
Ձեռք ձեռքի կը տան և կ՚օրհնեն որդոց!
Այդ յոյսըն է, որ ինձ կեանք է տալիս
Եւ վառ է պահում բոլոր եռանդըս,
Եւ առաւօտից մինչև երեկոյ
Արևում տրքնել և աշխատելը
Ծանրը չէ թըւում...

ՕՍԱՆ

Անցեալ տարուանից մինչև այս ամառ
Ինչքա՞ն ոյժ, ինչքան աշխատանք դըրիք
Աղբիւրի վերայ... Երնէկ իմանամ։
Ռափայէլ, գոնէ, ձեր այդքան երկար
Զարչարանքից յետ, գալու է աղբիւր,
Թէ՞ ձեր աշխատանք և յոյս—բոլորը
Զուր է կորչելու...

ՌԱՓԱՑԷԼ

Ո՛չ, Օսան ջան, ո՛չ!
Մինչև մի ամիս, Աստուած յաջողի.
Գիւղում այնպիսի աղբիւր քըչքըչայ,
Որ քո հրեշտակի չըքնաղ պատկերը
Նրրա երեսին լոյս տայ և շողայ...
Աղբիւր եմ ասում, Օսան ջան, աղբիւր,

Որ նրբա ամէն մի կաթիլ ջուրը
Նոյնքան պարզ, մաքուր, անարատ լինի,
Որքան մեր սէրը!...

ՕՍԱՆ

Երնէկ այն օրին!...

ՌԱՓԱՑԷԼ (նկատելով հօրը)

Հայրիս գալիս է, Օսան ջան...

ՕՍԱՆ

Գընա,
Որ քեզ չը տեսնի մեր տան մօտ կանգնած...
Ա՛ռ այս ծաղիկը, Ռափայէլ. ահա
Համբուրում եմ ես—դու էլ համբուրիր.
(Զգում է մի ծաղիկ, որ Ռափայէլը վերցնում է, համբուրում և հոտ քաշում).

ԵՐԵԻՈՅԹ III

ՍՈՂՈՄՈՆ, ՌԱՓԱՑԷԼ

ՌԱՓԱՑԷԼ

Հայրիկ, տըխար ես? Ինչու ես տրընքում?

ՍՈՂՈՄՈՆ

(Մտախոհ) Վաղը... աղբիւրի... շէնքսըն ենք գցում։ (Գնում է կրթնած Ռափայէլին).

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

(Գիւղի մէջ մի ընդարձակ հրապարակ, որի ճակատին երևում է փոքրիկ մատուռի չափ մի նոր կամարաձև շէնք։ Զորակից ջուրը թափւում է քարէ աւազանի մէջ։ Աւազանի մօտ՝ սրբատաշ վէմի վրայ նստած է Սողոմոնը, ձեռքին բռնած մի արծաթեայ գաւաթ։ Բազմութիւնը գնալով սաւառանում է։ Գիւղացիները՝ մեծ ու փոքր, տղայ-աղջիկ, մարդիկ և կանայք—ուրախալին տրամադրութեան մէջ

են, ուրախ զարթ։ Իւրաքանչիւրը հագած է իւր ունեցած լաւ զգեստը։ Հասարակութիւնը խտանում է աւելի աղբիւրի շուրջը։ Միմեանց հետ աշխոյժ խօսում են, ցոյց են տալիս դէպի աղբիւրը, Սողոմոնի վրայ և կարծես գոհութեամբ ձեռքները վեր բարձրացնում դէպի երկինքը։ Խառը շշուկի միջից պարզ որոշւում է աւազանի մէջ թափւող ջրի ձայնը։

Առաջին պատկերի և այս երրորդի միջև անցել է մօտ մի տարի ժամանակամիջոց)։

ԵՂԻԱ

Նայիր, Սողոմոն, տես ամբողջ գիւղը
Խմբւում է այստեղ, քո աղբիւրի շուրջ.
Եւ հրապարակը նման է պէսպէս
Ծաղկունքով պըճնւած մի դաշտավայրի.
Կարծես թէ այսօր Կարմիր-Կիւրակի
Կամ Վարդավառ է։ Ուր որ նայում եմ,
Ամենքի դէմքին տեսնում եմ անհուն
Գոհունակութիւն. ամենքի սիրտը
Լըցւած է սիրով և երախտիքով.
Իւրաքանչիւրը, անունդ տալիս,
Պատկառանք է զգում իւր հոգու խորքում։
Այն երկարատև նեղութիւնները,
Որ դու յանձդ առար այս անապական
Աղբիւրի համար, մի ծերի ոյժից
Վեր էին թըւում. բայց դու, Սողոմոն,
Ջինւած եռանդով և գոհունութեամբ,
Ցաղթեցիր բոլոր խոչընդոտներին
Եւ իմաստունի հեռատեսութեամբ
Այս ուրախ օրը մարգարէացար.
(Ցոյց տալով դէպի աղբիւրը)
Եւ ահաւասիկ բոլոր պըքնութեանց
Քաղցրիկ վաստակը, բոլոր յոյսերիդ
Բարի վախճանը...

ՍՈՂՈՄՈՆ

Եղիա, ես սըրտանց
Շընորհակալ եմ, որ բարեկամիդ
Մենակ չը թողիր այն օր, երբ այսպեղ
Աղբիւր հանելու իմ առաջարկը
Ոչ ոք չընդունեց և մինչև անգամ
Ինձ ցընդամիտ կարծեցին ոմանք...
Դու էիր, որ իմ աջ թևըս եղար
Աշխատանքներիս բոլոր ժամանակ։
Երբ մարդ մենակ է, յուսահատւում է,
Երբ ընկեր ունի, ծանրը բեռըն էլ
Թեթևանում է...
Ա՛ռ, քիզ է վայել ամենից առաջ
Այս անմահական պարգև ջըրից խըմել։
(Առաջարկում է նրան արծաթեայ թասով ջուրը, որ նա վերցնում խմում է)։

ԵՂԻԱ

Սողոմոն, ահա այս գործի համար
Համարեա ոչինչ չը խընայեցիր.
Ոչ դարիք, ոչ գոյք, ոչ հանգըստութիւն։
Բայց այնպիսի վարձ դու վաստակեցիր,
Որ փոխարինել նըրան չէ կարող
Աշխարհում ոչինչ—համագիւղացոց
Անսահման սէր և իւր յարգանքը։
Օրհնեա՛լ լինի քո բարի անունը
Եւ թող յաւիտեան անմոռաց մընայ
Բոլորիս սըրտում՝ սերընդից սերունդ
Եւ որդոց որդի! (Ելնում է քաշւում և տեղ է տալիս մի ալ ծերունու, որ մօտենում է Սողոմոնին երկու թոռնիկների հետ)։

ԾԵՐՈՒՆԻ

Սողոմոն, մեզ էլ
Արժանացրու քո անապական
Աղբիւրի ջըրին.

ՄՈՒՐՃ

1-ԻՆ ԹՈՌՆԻԿ

Ինձ էլ, պապ!

2-ՐԴ ԹՈՌՆԻԿ

Ինձ էլ!

ՍՈԳՈՄՈՆ

Այո, առաջ ձեզ, առաջ ձեզ կը տամ,
Փոքրիկ մանուկներ. առաջ երեխան
Պիտի յագեցնի ծարաւը, յետոյ
Միայն ծեր մարդը։ Խլմեցէք, որդիք.
(Առաջարկում է. Երեխաները խմում են).
Ինչպէս է?

1-ԻՆ ԹՈՌՆԻԿ

Շատ լաւ։

2-ՐԴ ԹՈՌՆԻԿ

Սառցի նըման է.

Ափամբս առաւ։

ԾԵՐՈՒՆԻ (Թոռնիկին)

Հիմա պաչեցէք այս պապի ձեռքը.
Նա է ձեզ համար այս ջուրը բերել։
(Երեխաները համբուրում են Սողոմոնի ձեռքը, և նա օրհնում է նրանք).

ՍՈԳՈՄՈՆ

Ապրէք, լաւ ապրէք և երկար ապրէք։
Աստուած օրհնի ձեզ, փոքրիկ մանուկներ!
Սարի կատուից այս քաղցր ջուրը
Ձեզ նըմանների համար եմ բերել,
Որ դուք վայելէք, աճէք, մեծանաք
Եւ խելօք, առողջ դաւակներ լինիք.
Իսկ մենք, ծերերս, մեր տեղը շուտով
Ձեզ կը տանք, այո։ Այսօր չէ վաղը—

Այդ Աստուած գիտէ—ինձ գերեզմանը
Իւր ծոցը կառնի և, ուխ, այլ ելնս
(Զգացուած) Զը պիտի լսեմ ազիզ աղբիւրիս
Այս քաղցր ձայնը, այս կըլկըլոցը...
Բայց դուք, որդիքս, որ դեռ շատ երկար
Պիտի սքանաք այս աղբիւրի վրայ,
Ինձ չը մոռանաք, այլ ամեն անգամ,
Երբ կը գաք այստեղ ձեր այրուած սիրտը
Զովացընելու, ինձ միշտ կը յիշէք,
Ողորմի կը տաք ձեր Սողոմոնին...
(Ծերունուն) Ալեւոր, դու էլ սըրա համը տես
Եւ ասա, եթէ մըտաբերում ես.
Ինչպէս էր մեր Հին-աղբիւրի ջուրը,
Եւ ինչպէս է սա? (Ծերունին խմում է, հրճանքով գլուխը շարժում և մի պահ լուռ մնում).

ԾԵՐՈՒՆԻՆ

Մեր Հին-աղբիւրը
Ունէր գովելի և պատուական ջուր.
Պարզ էր նա, ինչպէս հալուած մարգարիտ,
Կաթնահամ, սառը... Բայց թող ջուխտ աչքով
Կուրանամ,—եթէ ես չեմ սովորել
Լաւը ու վատը իրարից ջոկել—
Սա—ուրիշ բան է!

ՍՈՂՈՄՈՆ

Ես էլ կարծում եմ,
Սա—ուրիշ բան է!

ԾԵՐՈՒՆԻ

Լոյս դառնայ հայրդ,
Սողոմոն. նա էլ քեզ պէս մեր գիւղի
Բարերարն էր. նա հին կամուրջը
Վերանորոգեց, դու Հին-աղբիւրը։
Ձեր անունները թող անջնջելի

Մընան յաւիտեան ամենքիս սըրտում!

(Ծերունին քաշւում է մի կողմ, և առաջ է գալիս մի երիտասարդ գիւղացի)։

ԵՐԻՏԱՍԱՐԴ

Սողոմոն ապեր, այս երիտասարդ
Խըմբի կողմից եմ շընորհաւորում.
Դու մեր բոլորի բարի հայրըն ես,
Մեր սիրելին ես։ Այս ազնիւ գործով
Մեզ համբերութեան և աշխատանքի
Օրինակ տըւիր. դու բարձրացըրիր
Մեր հոգին, մեր մէջ եռանդ վառեցիր,
Եւ վըսեմ գործի անհուն տենչանքով
Լի է մեր հոգին! Տղերք, երկար կեանք
Եւ երջանկութիւն մաղթենք մեր հօրը
Եւ «կեցցէ» կանչենք!...

(Երիտասարդները կեցցէներով լցնում են օդը)։

ՍՈՂՈՄՈՆ

Ապրէք, որդիքս։

Տայ Աստուած, որ այս մաքուր աղբիւրը
Սէր և հաշտութիւն բերի մեր գիւղին!
Այս առատ ջըրով մենք կը լիանանք,
Եւ մինչև անգամ մեր այգիներին
Բաժին կը հասնի։ Եթէ այսուհետ
Կապի երկինքը, և անձրև չը գայ —
Էլ առաջւայ պէս չենք մընալ անճար.
Այս ցուրտ հեղուկը կը զովացընի
Մեր պարտէզների ծառըն ու թուփը,
Կանաչ մարգերի հոտաւէտ խոտը
Եւ բուրաստանը... Կը կենդանանայ
Կըրկին մեր գիւղը, կը գեղեցկանայ
Փարթամ կանաչով ու ծաղիկներով,
Եւ պարարտ հողը կը բեղմնաւորւի
Ատրճոյ տըւած իւր բարիքներով

Ի վայելումն և ի բերկրութիւն
Մեր ժողովրդի... Բայց լաւ լսեցէք
Իմ այս կրպակը, որ ես թողնում եմ
Ձեզ ջահէլներիդ։ Դուք այս աղբիւրը
Աչքի լոյսի պէս պիտի փայփայէք
Եւ այնպէս հոգաք, որ մի մատաչափ
Չը պակսի ջուրը, չ'աւերուի շէնքսը,
Եւ շրջակայքը չը խոպանանայ,
Այլ այսպէս ահա գիշեր և ցերեկ
Քաղցր քչքչայ և ուրախացնի!...
Օ, հաւատացէք, բարի կամք է պէտք.
Եւ ժամանակով, ես ձեզ ասում եմ,
Նոյն իսկ այս տեղը, որ այժմ մի չոր
Տարածութիւն է, մի կանաչ, սիրուն
Պարտէզ կը դառնայ, և սաղարթագեղ
Սօսենիների դիւրեկան և թանձր
Ըստուերների մէջ պարուրուած կը մնայ
Օրհնեալ աղբիւրը և իւր մարգարտեայ
Սառը ցայտերով կը սրփռի իւր շուրջ
Անուշ զովութիւն, և թռչունների
Աշխոյժ խրմբերը ծառաստանի մէջ
Ուրախ երգելով ձայն ձայնի կը տան
Այստեղ օրնիբուն, վաղ առաւօտից
Մինչև վերջալոյս...

ԵՐԻՏԱՍԱՐԴ

Մեր պարտքը լինի
Կատարել, ինչ որ մեզ կրտակում ես։

ՍՈՂՈՄՈՆ (նկատելով մի աշուղի)

Դու էլ այստեղ ես, մեր աշուղ Թէլան?
Այս ուր էիր դու այսքան ժամանակ?
Որտեղ էր, ասա, սազը դ ձէն տալիս?

ՄՈՒՐՃ

ԱՇՈՒՂ

Գիւղէ գիւղ ընկած մարդ էի գալիս,
Հեռու տեղում էր սպրիս ձէն տալիս։
Մի օր վաթանքս մլուպաբերեցի
Ու եկայ սրբոյս կարօտն առնեմ։

ՍՈՂՈՄՈՆ

Ծընընդավայրը քաղցր է լինում,
Երբ շատ ես մընում օտարութեան մէջ։

ԱՇՈՒՂ

Բայց մանաւանդ այդ ծընընդավայրը
Որ ունի երկու աննման աղբիւր։

ՍՈՂՈՄՈՆ

Ինչպէս հասկանանք մենք քո ասածը?
Դու աշուղ ես և սիրում ես խօսել
Հանելուկներով։ Բայց մենք հասարակ
Մարդիկ ենք, մեզ հեշտ պէտք է պարզ խօսել։

ԱՇՈՒՂ

Թէև աչքովքս ոչինչ չեմ տեսնում,
Բայց ականջովքս պարզ լսում եմ ես
Երկու կըչքող աղբիւրի ձայնը...

ՍՈՂՈՄՈՆ

Նոր տաղեր ունիս, աշուղ, թէ էլի
Հին երգերըդ ես ամեն տեղ կըրկնում?

ԱՇՈՒՂ

Թէ հրաման կը տաս...

ՍՈՂՈՄՈՆ

Ասա, լըսում ենք.

ԱՇՈՒՂ (ածում է սազը և երգում)

«Աղբիւրն եկաւ քչ-քչալով
Գիւղի միջում ձէն տրւեց.
Ախ, ջան աղբիւր, զիլալ աղբիւր.
Մեռած գիւղին կեանք տրւեց։
Քեզ յաւիտեան փառք ու պատիւ,
Մեր աչքի լոյս Սողոմոն։

Եդեմական անուշ ջուրը
Դէմ էր առել ժէռ քարին.
Իմաստունը հընար գըտաւ,
Ճամբա բացաւ աղբիւրին։
Քեզ երկար կեանք, կարմիր արև,
Մեր աչքի լոյս Սողոմոն։

Օրը բացւեց, ջան իմ վաթան,
Հիմայ ծաղկիր, կանաչիր.
Ջուրըն եկաւ անմահական—
Քեզ հալալ է—վայելիր։
Օրհնեալ լինի յիշատակըդ,
Մեր աչքի լոյս Սողոմոն։

ՍՈՂՈՄՈՆ

Աշուղը նա է, ով ժողովրդի
Սըրտից է խօսում, ում ձեռքի սազը
Ժողովրդի հետ ուրախանում է
Եւ լաց է լինում ժողովրդի հետ։
Դէհ, առ ջուրը անմահական.
Քեզ հալալ է—վայելիր։

(Աշուղը վերցնում է թասը և խմում։ Առաջ են գալիս մի քանի հասակաւոր կանայք երեխաների հետ։ Սողոմոնը բոլորին ջուր է տալիս։ Մի պահ, բացի հոսող ջրի ձայնից, ուրիշ ձայն չէ լսւում։ Քիչ լեռով երևում է ՄԵԼՔՈՆը, ՕՍԱՆԻ և միւս որդոց հետ։ Նա վարանման մէջ է. դժւարանում է վճռական քայլ անել. վերջապէս բարի զգացմունքը յաղթում է, և նա գրկաբաց նետւում է Սողոմոնի գիրկը, որը զգացւում է հակառա-

կորդի խոնարհութիւնից և մեծահոգութեամբ սեղմում է նրան իւր կրծքին)։

ՄԵԼՔՈՆ

Դու ինձ ներում ես, Սողոմոն? ասա։

ՍՈՂՈՄՈՆ

Անցածը անցաւ... Ձեռք ձեռքի խրփենք,
Իրար հետ հաշտւենք!

ՄԵԼՔՈՆ (*ձեռքը խփելով նրա ձեռքին*)

Հաշտւենք, Սողոմոն,
Եւ այսուհետև մինչև գերեզման
Բարեկամ լինինք! Դու ինձ յաղթեցիր։
Ոչ, չը յաղթեցիր, այլ ոչընչացրիր,
Եւ ես ամօթով մընացի քեզ մօտ
Եւ գիւղամիջում...

ՍՈՂՈՄՈՆ

Ես ասում էի,
Որ կը դայ մի օր, և իմ աղբիւրը
Անուշ ձայն կը տայ... Այն օրը եկաւ։
(*Առաջարկում է թասը*) Առ և համը տես. հրաշալի ջուր է։

ՄԵԼՔՈՆ (*խմելով*)

Անմահական ջուր սրբան են ասում,
Որովհետև սա մարդու կեանքի վրայ
Մի քանի տարի կ'աւելացընի։—
Բարեկամ, հիմա լըսիր ինչ կ'ասեմ։
Եթէ հաշտւում ենք, պէտք է լաւ հաշտւենք։
Ինձ էլ և քեզ էլ շատ լաւ յայտնի է,
Որ մեր պատճառով մեր խեղճ որդիքը,
Որ իրար այնքան մօտ էին սրրտով,
Միմեանցից հեռու, մոլորւածի պէս,
Գլուխները կախ, ձեռները ծոցում,
Միշտ իրար կարօտն էին քաշում.

Թող ձեռք ձեռքի տան և հայրերի պէս
Միմեանց հետ հաշտուեն։

ՍՈՂՈՄՈՆ

Մելքոն, իմ սրբոց
Դու ջուր խըմեցիր։ Լեզուիս ծայրին էր,
Ինչ որ ասացիր։ Մօտ եկ, Ռափայէլ!

ՄԵԼՔՈՆ

Օսան, մօտեցիր։

(Ռափայէլը, որ կանգնած էր մի տեղ և աչքը Օսանուց չէր հեռացնում, ուրախ առաջ է գալիս, նոյնպէս և Օսանը, որը կարմրում է և աչքերը ցած պահում)։

ՍՈՂՈՄՈՆ

Ձեռք ձեռքի տըւէք, սիրելի որդիք,
Եւ հանգըստացէք հոգով ու սրբոով.
Էլ սրբանից յետ ձեզ ոչ ոք, ոչինչ
Չի համարձակուիլ միմեանցից բաժնել։
Տեսնում էք դուք այս մաքուր աղբիւրը?
Սա, հաւատացէք, ինձ շատ թանկ նըստեց.
Խըլեց ինձանից իմ այս ծերութեան
Այժերի վերջին մընացորդըն էլ.
Կեանքիս ընթացքում, սև օրւայ համար,
Գանձած ունէի անընչան, համեստ
Մի կարողութիւն, այն էլ կըլանեց.
Եւ մինչև անգամ, հաւատացէք ինձ,
Ձեր հարսանիքի հանդիսի համար
Ոչինչ չը մընաց... Բայց ահա այսօր
Իմ երջանկութեան գագաթին հասայ,
Եւ փառք եմ տալիս ես քեզ, Արարիչ,
Որ արժանացրիր ինձ մի այսպիսի
Բախտաւորութեան! Կա՛յ աւելի մեծ
Վարձատրըրութիւն, քան այն վիճակը,
Երբ մարդ, հասնելով իւր նըպատակին,

Շերջապատված է ընդհանուր սիրով?
Բայց նամանաւանդ ցընծում է հոգիս,
Որ իմ պրքնութեանց քաղցրիկ պտուղը
Դարձաւ հաշտութեան և սիրոյ աղբիւր,
Այո, հաշտութեան և սիրոյ աղբիւր...
Դէհ, օրհնեալ լինիք, իմ անգին որդիք!

ՄԵԼԻՔՈՆ (օրհնում է)

Օրհնում եմ և ես, սիրելի որդիք,
Դու էլ, Տէր Աստուած, վերեւից օրհնիր.
Թող սրբանց սերը, որ այսքան ջերմ է,
Այսպէս էլ մընայ նաև մինչև վերջ!
(Ռափայէլի ընկերները հուռռա են կանչում)

ՎԵՐՋ

Բաքու. 1900 թ. ապրիլի 14.